

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Ամոյս Յին՝ Գրիստոսի Տեառն մե-
րոյ Պայծառակերպութեան հանդիսա-
ւոր տօնի օրը, Ամեն, Ս, Պատրիարք
Հայրն Ս. Պատարագ մատուցանելով
Վարդապետութեան բարձր աստի-

ճան տուաւ Ս. Աթոռոյս Միաբա-
նութենէն հինգ Սարկաւազաց, որք
են հետեւեալները, իրենց նոր ստա-
ցած Քահանայական օժման անուանե-
լով հանդերձ.

Փարբիէլ Սարկաւազ	Խաղայենց	Խարբերդցի	Սահակ Վարդապետ
Մելքոն	"	Յակովբեան Թէքիրտաղցի	Վահան "
Մաքսուտ	"	Մաքսուտեան Դամասկացի	Ղեւոնդ "
Կարապետ	"	Սաքայեան Սեւերեկցի	Գարեգին "
Սիմօն	"	Սանասարեան Վանեցի	Յակովբ "

Սոցա առաջին երեքը ժառանգա-
ւորաց Վարժարանէն յառաջ եկած և
նոյն հաստատութեան մէջ Ուսուց-
չութեան և Տեսչութեան պաշտօնիւ,
իսկ վերջի երկուքն եկեղեցական պաշ-
տօն վարելով. իւրեանց հաւատարիմ
աշխատութեամբ արժանաւոր գտնը-
ւեցան սոյն աստիճանի: Ս. Աթոռոյ
Կառավարութիւնը կոչելով յիշեալնե-
րըն ՚ի կուսակրօն Քահանայութիւն,
յոյս մեծ ունի որ նորա իւրեանց կոչ-
ման համեմատ կեանքով մը, իւր պար-
ճանաց կնիք և հանուր Ազգի փոսոյ
ու օգտին նախանձախնդիր հովիւներ
պիտի հանդիսանան. որոյ վստի բարե-
մաղթու եմք առ Հօտապետն Քրիս-
տոս, առնել զսոսա մշակս առանց ա-
մօթոյ, առաջնորդելով նոցա իւր ա-
մենասուրբ Հոգւովն ընթանալ և հս-
վուել ըստ անմոլար շուղաց Հայաս-
տանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ:

—Քաղաքիս շքակալքը բնակող և
Տէրութենէ ապստամբ երկու Թախ-
հա և Թարսպին կոչուած արապ ցեղերու
Շէխեր, որք նախորդ կառավարչաց նոյն
կողմերը այցելութեան ատեն մեծագին
ընծաներու տակ ծածկած էին ցարդ
իրենց ապստամբութիւնը. այս օրերս
ձերբակալուած են: Տեղւոյս Վսեմ.
Կառավարիչը, երկու ամսէ ՚ի վեր Կա-
ռավարական կարգադրութեանց պատ-

ճառաւ Ղաղէ գտնուելով, յիշեալ շե-
խերէն հինգական հօգի, իւր աջա-
լուրջ և արգարատէր ջանիւքն ձեռք
բերելով քաղաքս բերած է, ուր կը
սպասեն Բ. Գրան հրամանին: Կառա-
վարիչն ամոյս ՉՉին իւր այցելութե-
նէն դառնալով սեղս ժամանեց:

—Բնթղեհէմ բնակող արապ մը, որ
երկու տարի առաջ Յոյն կին մը յօշ-
յօշ պատառած և սպանած ըլլալով
ցարդ աներեւոյթ եղած էր, այս օրե-
րըս Ոստիկանութեան հարիւրապետի
հետազոտութեամբ ձանցուելով Ղա-
ղէի մէջ, քաղաքս բերուած եւ բան-
տարկուած է:

—Ամսական Իանէ հաւաքելու հը-
րամանը Բ. Դունէն Տեղւոյս Կառա-
վարութեան եւս հաղորդուելով, ըս-
կրաւ ժողովուիլ: Մահմետական և
նչ — Մահմետական հոգատակք բա-
րեխնամ Տէրութեան օգնելու գոհա-
ցուցիչ յոյս կրտան: — Քաղաքիս խա-
ղազութիւնը Վսեմ. Կառավարչի ա-
ջալուրջ հսկողութեամբ անխղով է:

—Անցեալ տարուան անձրևներու
նուազութեան և զորածողովի առթիւ
հունձքը նուազ ըլլալով ցորենը սուղ
կը գտնուէր. սակայն այս օրերս սկը-
սած է գրսէն՝ թէ՛ ծովէն և թէ՛ ցա-
մաքէն առատութեամբ գալ: